ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/28, 28.02.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Արմֆարմացիա» ՓԲԸ

Պատվիրատու՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին աճուրդը 22, 25, 31, 42, 43, 44 և 49-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոքաբեր՝ «Արֆարմացիա» ՓԲԸ

ՀՎՀՀ 02505735

Իրավաբանական անձի գրանցման համար 286.120.02608

գրանցված 14.02.1997թ.

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պուշկին 56

Ներկայացուցիչ՝ Միքայել Ավետիսյան

/անձն. AN 0746270 տրվ. 09.12.2013թ. 003-ի կողմից/

Ծանուցման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 3, 3-րդ հարկ

Հեռ. /094/ 21 69 92

Պատվիրատու՝ Երևանի Մխիթար Հերացու անվան

պետական բժշկական համալսարան Հիմնադրամ,

հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2

գնման ծածկագիր՝ ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ

առարկա՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կարիքների համար « ԵՊԲՀ կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերում» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ

Բողոք

«ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով « ԵՊԲՀ կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերում» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ հանձնաժողովի/այսուհետ՝ Հանձնաժողով/ 2019թ. փետրվարի 7-ի N 1 որոշմամբ հրավեր է ներկայացվել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կարիքների համար « ԵՊԲՀ կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերում» ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ/այսուհետ՝ Հրավեր/:

8622-19
28.02.2019թ

Վերոնշյալ գնման հրավերի 1.1 կետով սահմանված գնման առարկայի թիվ 22,25,31,42,43,44,49 -րդ չափաբաժիններում ապրանքների գնման աճուրդի մասնակցության համար հայտ է ներկայացվել նաև <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ն:
19.02.2019թվականի Հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ ճանաչվել են հաղթող մասնակիցներ <<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի:
Հանձնաժովի 22 փետրվարի 2019թ.-ի ժամը 16:45 կազմվել է Հանձնաժողովի թիվ 3 արձանագրություն,որի 1-ին կետի համաձայն<<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընտրված մասնակիցների որոշման մասին:
նույն արձանագրության 1.1. կետի համաձայն Ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ շրջաբերականի 2-րդ կետով և հաշվի առնելով այն հանգամանքը ,որ գնման ընթացակարգը գտնվում է որակավորման փուլում հանձնաժողովը որոշեց <<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդը շարունակել թղթային տարբերակով,իսկ 1.2. կետի համաձայն առաջարկվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշներով նախատեսված փաստաթղթերը:

Գտնում ենք որ Հանձնաժողովի 19.02.2019թվականի Հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ <<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 22,25,31,42,43,44,49-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնելու որոշումը, այնուհետև որակավորման փուլ անցնելու վերաբերյալ Հանձնաժողովի 22 փետրվարի 2019թ.-ի ժամը 16:45 կազմվել է Հանձնաժողովի թիվ 3 արձանագրություն, անհիմն է հետևյալ հիմնավորմամբ.

1. Համաձայն Հրավերի 7.2 կետի էլեկտրոնային աճուրդը սկսվում է 2019.02.18. 09:30-ին:
2. ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանի պետական կառավարման մարմիններին ուղղված գրության համաձայն 11.02.2019թ.-ի ժամը 09:00-ից մինչև 19.02.2019թ.-ը ժամը 18:00 ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ,որոնց հետևանքով առաջացել է ֆորս-մաժորային իրավիճակ և հնարավոր չի եղել ապահովել սահմանված կարգավորումներին համապատասխան ընթացակարգերի անցկացումը,որի հիման վրա 19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը ,որոնց հայտերի վերջնաժամկետ է սահմանված եղել վերոնշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ հայտարարել չեղյալ:
3. Տվյալ դեպքում էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդիրների հետևանքով էլեկտրոնային աճուրդի հակադարձ աճուրդները 2019.02.18 ժամը 10:30-ից [illegible]

գրկվել է <<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 22,25,31,42,43,44,49-րդ չափաբաժիններով հակադարձ աճուրդներին մասնակցելու հնարավորությունից:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստական և իրավական հիմնավորումները և ղեկավարվելով << Գնումների մասին>> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով խնդրում եմ պարտավորեցնել <<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ>> ծածկագրով « ԵՊԲՀ կարիքների համար դեղորայքի և պարագաստանյութերի ձեռքբերում» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ հանձնաժողովի չկայացած ճանաչել/ հայտարարել/ <<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը 22,25,31,42,43,44,49-րդ չափաբաժիններով :

Միաժամանակ խնդրում եմ բողոքը բավարարելու դեպքում բողոքարկման վարձը փոխանցել <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ի <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ 163008100220 հաշվեհամարին:

Կից ներկայցվում են

1. <<Արֆարմացիա>> ՓԲԸ -ի պետական ռեգիստրի քարտվածքի պատճեն
2. բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի բնօրինակը
3. լիազորագրի բնօրինակը , արտոնագրի և անձնագրիս պատճեն
4. <<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ>> ծածկագրով գնահատող Հանձնաժողովի 22 փետրվարի 2019թ.-ի N3 արձանագրության և հրավերից պատճենները
5. ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանի՝ պետական կառավարման մարմիններին ուղղված գրության պատճեն

<<Արֆարմացիա>> ՓԲԸ-ի

ներկայացուցիչ՝ Մ. Ավետիսյան

28.02.2019թ.